

ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթներ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-2)

1) Պաշտոնի անձնագրով նախագրեսված հիմնական գործառույթներն են.

- ա)Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի Ենթակայության կազմակերպությունների բյուջեների և այլ հարցերի քննարկմանը,
- բ)օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի կարգադրությունների և պետական կառավարման իրավասու մարմինների մեթոդական ցուցումների հիման վրա կազմում և ներկայացնում է համայնքի բյուջեի, համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշման նախագծեր, տալիս դրանց ֆինանսա-տնտեսական հիմնավորումները,
- գ)կատարում է ֆինանսական գործունեության վերլուծություն և հաշվետվությունների ու ծախսային նախահաշիվների կազմում,
- դ)պայմանագրերին համապատասխան դուրս է գրում հաշվարկային հաշիվներ և կազմակերպում համայնքային սեփականություն համարվող վարձակալության տրամադրված հողերի, գույքի վարձավճարների և այլ եկամուտների մուտքերի ապահովումը
- ե)ստացված հարկային և հաշվարկային փաստաթղթերի ճշտությունը ստուգելուց հետո, ստորագրում է և կատարում համապատասխան դրամական փոխանցումներ,
- զ)համայնքապետարանի Ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին և հաշվապահներին իրազեկում և պարզաբանումներ է տալիս փոփոխված և նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ,
- Է)բաժնի պետի հետ քննարկում ենք համայնքային Ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները և ֆինանսա-տնտեսական գործունեությունը, համապատասխան առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին,
- Ը)կազմակերպում է համայնքային Ենթակայության կազմակերպությունների հաստիքային ցուցակների և ծախսերի նախահաշիվների ստուգման և հաստատման գործընթացը,
- Թ)սահմանված կարգով վերահսկում է պետական բյուջեից համայնքային Ենթակայության հիմնարկներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործումը,
- Ժ)ապահովում է հաշվապահական հաշվառման վճարման պաստաթղթերի կազմումը համապատասխան ծրագրերում,
- Ի)ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ է կազմում և հանձնում համապատասխան մարմիններին:

2) Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ա)բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

բ) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բնագավառը համակարգող այլ օրենքների և դրանցից բխող Ենթաօրենսդրական ակտերի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ) ոռուերենի (ազատ) կամ մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի իմացություն:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-6)

1) Պաշտոնի անձնագրով նախատեսված հիմնական գործառույթներն են.

ա) առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին. իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթյուրների և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին ,

բ) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

գ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, գեկուցագրեր և այլ գրություններ.

դ) իրականացնում է գյուղատնտեսության, անասնապումության և բուսասանիտարայի, շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն և համայնքի դեկավարին՝ տվյալ բնագավառում վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված աշխատանքները,

ե) իրականացնում է բաժնում հարուցված վարչական վարույթների հետ կապված բոլոր գործառույթները,

զ) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է նաև այլ գործառույթներ,

է) իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

2) Նշված թափուր պաշտոնը գբարեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության իիմունքների և վարչական վարույթի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանցից բխող Ենթաօրենսդրական ակտերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Վարչական իրավախստումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

զ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ) ոռուերենի (ազատ) կամ մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի իմացություն:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-5)

1) Պաշտոնի անձնագրով նախատեսված հիմնական գործառույթներն են.

ա) ապահովում է բաժնի փաստաթյուրային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթյուրերը,

բ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին գեկուցում է բաժնի պետին.

զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, գեկուցագրեր և այլ գրություններ.

Ե) ասնակցում է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման, կառավարման, ամենամյա գույքրման հետ կապված աշխատանքների կատարմանը.

զ) մասնակցում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների օտարման ամենամյա և հնգամյա ծրագրերի կազմմանը.

Է) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է նաև այլ գործառույթներ, օլում ըստ դաշտային սպառության գործեանելու և համար սպառականը է:

Հայության պահանջման առաջնահարցը կազմության առաջնահարցը է:

ա) առնվազն միջնակարգ կրթություն.

բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի, աշխատակազմի կանոնադրության և իր իհազրությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամադրանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթները կանցկացվեն 2021 թվականի մարտի 10-ին, ժամը 15:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Վարչական շենքում՝ ք. Մեղրի Չորավար Անդրանիկի 2 հասցեում:

Մրցույթներին մասնակցելու հրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ):

Դիմուն քաղաքացիները <<Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ կամ <<Սյունիքի մարզապետարանի աշխատակազմի Տի և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթեր՝ ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով ան պաշտոնը, որին հավակնում է դիմուր).

բ)համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճեները.

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Նորոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է հիշընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու իհազորությունների հրականացմանը.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Ե) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

զ) օրենքի 12 հոդվածի «Ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեղի անձինք ներկայացնում են նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանքը.

Ե) ՎԵԿ լուսանկար՝ 3 × 4 սմ չափսի.

ո) անձնագիր պատճեն:

Քարարագին լիաստառութեռ ներկայագնում Է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00 - 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերին: Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 փետրվարի 23-ը՝ ժամը 18:00-ն:

Միջույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացնուց տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարզաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզի Մերիքի

համայնքապետարանի աշխատակազմ (**Հասցեն ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2, հեռ. 4-35-00**) և **Հյունիքի մարզպետարանի Տեղ և ՀԳՄ վարչություն** (ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 2-35-50):

05.02.2021

X *Zak*
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ
Подписано: ZAKARYAN MKHITAR 2012710034